ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 598-Ա **27 սեպտեմբերի 2022 թվական**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ԱԼԱՇԿԵՐՏԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 8/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԱՎԵՆ ՌՈՒԲԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ՍՎԵՏԼԱՆԱ ԵՎԳԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ.-ի թիվ ՀՕ-117-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, նկատի ունենալով, որ շենք-շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, շինությունները կառուցված չեն կամ չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հիմք ընդունելով Վարդաձոր բնակավայրի բնակիչներ Զավեն Ռուբենի Գրիգորյանի և Սվետլանա Եվգենի Գրիգորյանի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Վերականգնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդաձոր բնակավայրի Ալաշկերտի փողոց, թիվ 8/2 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Զավեն Ռուբենի Գրիգորյանի (ծնված՝ 06.02.1952 թվականին) և Սվետլանա Եվգենի Գրիգորյանի (ծնված՝ 05.12.1965 թվականին) բնակելի տան սպասարկման համար անհրաժեշտ 05-084-0013-0012 կադաստրային ծածկագրով փաստացի օգտագործվող 0,1849 հա տնամերձ հողամասի և դրա վրա օրինական կառուցված 98,82 քմ մակերեսով բնակելի տան (կառուցված՝ 1993 թվականին), 19,50 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբի կամ աստիճանահարթակի (կառուցված՝ 1993 թվականին), 38,22 քմ մակերեսով բնակելի տան (կառուցված՝ 1993 թվականին) և 209,00 քմ մակերեսով ալրաղացի (կառուցված՝ 1993 թվականին) նկատմամբ գույքային իրավունքները (համաձայն չափագրման փաստաթղթերի):

2. Անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդաձոր բնակավայր, Ալաշկերտի փողոց, թիվ 8/2 հասցեն:
3. Հողամասի վրա առկա են ինքնակամ կառուցված 108,30 քմ մակերեսով բնակելի տուն, 19 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբ կամ աստիճանահարթակ, 42,75 քմ մակերեսով բնակելի տան բաց պատշգամբ կամ աստիճանահարթակ և 113,27 քմ մակերեսով ինքնակամ շինություն:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորում ունեցող անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծին համապատասխան:
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

27 սեպտեմբերի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 599-Ա **27 սեպտեմբերի 2022 թվական**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՔԱՂԱՔ ՄԱՐՏՈՒՆԻ, ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-003-0502-0033 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով, հիմք ընդունելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն որոշումը, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, այն կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Լյովա Գևորգյանի կողմից ներկայացված դիմումը ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու վերաբերյալ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, թիվ 19 հասցեում գտնվող Լյովա Լիպարիտի Գևորգյանին (ծնված՝ 13.06.1969 թվականին) և Նաիրա Վազգենի Սարգսյանին (ծնված 15.09.1975 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-003-0502-0033 կադաստրային ծածկագրով, 0,005867 հա

փաստացի օգտագործվող հասարակական կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 58,67 քմ. արտաքին մակերեսով խանութի առաջին հարկը (ներքին մակերեսը՝ 54,54 քմ, կառուցված 2007 թվականին) և 58,67 քմ. արտաքին մակերեսով խանութի երկրորդ հարկը (ներքին մակերեսը՝ 53,64 քմ, կառուցված 2007 թվականին) ճանաչել օրինական:

2. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
3. Առկա է ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների ծածկագիրն է՝ 2022SDHJYC):
4. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝

խանութի 1-ին հարկի համար՝ 58,67x3938= 231042 (երկու հարյուր երեսունմեկ հազար քառասուներկու) ՀՀ դրամ,

խանութի 2-րդ հարկի համար՝ 58,67x3938= 231042 (երկու հարյուր երեսունմեկ հազար քառասուներկու) ՀՀ դրամ:

Ընդամենը՝ 462084 (չորս հարյուր վաթսուներկու հազար ութսունչորս) ՀՀ դրամ:

5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

27 սեպտեմբերի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 600-Ա 28 սեպտեմբերի 2022 թվական

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԾԱԿՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԱՆ ԿԱՄՈՒՐՋ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԻ 1-ԻՆ, 2-ՐԴ ՓՈՂՈՑՆԵՐԻ, ԶՈՀՎԱԾ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ, 6-ՐԴ ՓՈՂՈՑ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ ԵՎ 3-ՐԴ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի №596-Ն որոշման պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Մարտունու համայնքապետարանին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծակքար բնակավայրի բնական կամուրջ տանող ճանապարհի 1-ին, 2-րդ փողոցների, զոհված զինվորական ծառայողների փողոցի, 6-րդ փողոց 4-րդ նրբանցքի և 3-րդ փողոց 2-րդ նրբանցքի լուսավորության ցանցի շինարարության թույլտվություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՀՈՎԵՅԱՆ

28 սեպտեմբերի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 601-Ա 28 սեպտեմբերի 2022 թվական

«ՀԷՑ» ՓԲԸ-ԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՐԴԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ՆԵՐՔԻՆ ԴԵՄԵՐ ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ Ա/Ձ ՍԵՐԳԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԼՏԵ-Ի 10 ԿՎ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի №596–Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 27.12.2021 թվականի թիվ 25-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.«ՀԷՑ» ՓԲԸ-ին տալ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Վարդաձոր բնակավայր, Ներքին Դեմեր թաղամաս, թիվ 1 հասցեում Ա/Ձ Սերգե Հակոբյանին պատկանող տարածքի ԼՏԵ-ի 10 կվ էլեկտրամատակարարման շինարարության թույլտվություն:

2.Պարտավորեցնել «ՀԷՑ» ՓԲԸ-ին Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 15000 (տասնհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք շինարարության թույլտվության համար:

3.Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ Մարտունի համայնքի ղեկավարին ներկայացնել №2-5 ձևի տեղեկանք:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

28 սեպտեմբերի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 602-Ա

29 սեպտեմբերի 2022 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 100 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Մարտունի համայնքի 100 և բարձր տարիք ունեցող հետևյալ քաղաքացիներին տրամադրել ֆինանսական օգնություն հետևյալ չափերով.

Հ/Հ	Ազգանունանուն, հայրանուն	Գումարը
1.	Սարիբեկ Առաքելի Արշակյան (Աստղաձոր)	50 000
2.	Ռոզա Հակոբի Գասպարյան (Մադինա)	50 000
3.	Ֆենիկ Վարդանի Փաշոյան (Երանոս)	50 000
Ընդամենը՝	150 000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ	150 000

2. Հանձնարարել Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնին գումարը դուրս գրել համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Մարիամ Համբարձումյանի անունով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

29 սեպտեմբերի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 603-Ա

29 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-066-0302- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2005 թվականի №2387-Ն որոշման 48-րդ կետի, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մաին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի և 46-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, և հիմք ընդունելով Ներքին Գետաշեն բնակավայրի վարչական ղեկավարի գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող 05-066-0302- կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դեմեր թաղամաս, 9-րդ փողոց, թիվ 3 հողամաս հասցեն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՀՈՎԵՅԱՆ

29 սեպտեմբերի 2022 թվական
ք. Մարտունի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 604-Ա

29 սեպտեմբերի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԿԱԶՄԵՐՆ ՈՒ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի վտանգավոր տարածքներից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման միջոցառումները պլանավորելու, նախապատրաստելու և իրականացնելու համար ստեղծել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի տարահանման հանձնաժողով:

2. Հաստատել՝
1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի տարահանման հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի տարահանման հանձնաժողովի աշխատանքային խմբերի կազմերը՝ համաձայն հավելված N 2-ի.
3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 3-ի:

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի տարահանման հանձնաժողովին՝ գործունեության ընթացքում ղեկավարվել «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշմամբ հաստատված «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգ»-ով, սույն որոշմամբ հաստատված կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Հ. ՀՈՎԵՅԱՆ**

29 սեպտեմբերի 2022 թվական
ք. Մարտունի